

ՍՈՒՐԲ ՀՈՒՓՍԻՄՅԱՆ ԿՈՒՑԱԵՐԸ

Իբրեւ լուսաւոր՝ ծագեցիմ,
փարատել զմէզ խաւարի ի Հա-
յաստոմն աշխարհես.

Ազարտեցեղոս, էջ 15

Հունիս ամսի 5-ին ս. Էջմիածնում հա-
վատացյալների խումբն ընդունելու ներ-
կայութեամբ չքեղ պատարագով տոնվեց
Հռիփսիմյանց կույսերի տոնը:

Հայոց եկեղեցին իր գոյութեան արշա-
լույսից սկսած շատ երկանեռ նահատակներ
է ունեցել, որոնց յուրաքանչյուրի համար
եկեղեցու երախտադետ հայրերն առանձին
հիշատակելի օրեր են նշանակել և առօրյա
ժամասացութեան ընթացքում ամեն տարի
ժամանակին անխախտ կատարում են ա-
ղօթներում ու շարականներում նրանց ա-
նունները հիշատակելով:

Այդ տոների շարքում իր չքեղութեամբ
ու հանդիսավորութեամբ առանձնապէս աչ-
քի է ընկնում նաև Հռիփսիմյանց տօն պաշ-
տելի կույսերի տոնը, որոնք ըստ պատմա-
դրի իրենց նահատակութեամբ Հայոց քրիս-
տոնեութեան դարձի դիմաւոր շարժառիթն
են հանդիսացել:

Ինչպես հաղորդում է հայ պատմա-
դրութիւնը, Գ. դարի վերջերին Հայոց
Տրդատ մեծ թագաւորի հրամանով մայրա-
քաղաք Վաղարշապատի հյուսիսային-արեւե-
լյան ծայրամասում սրբաժողովող եղավ
Հռիփսիմեն յուր ընկերուհիների հետ, իսկ
հաջորդ օրը մայրաքաղաքի հարավային
դռան մոտ ընկավ դահլճների ձեռքով
Հռիփսիմի դատարարակէռնի ու կույսերի
մայրապետ Գայանեն, որ արքունիք եղած
միջոցին համարձակվել էր յուր սանուհի
Հռիփսիմին հորդորել ու սրտապնդել

քրիստոնեութեան ուխտին հաստատ մնալ և
չզայթակղվել հեթանոս արքայից:

Ի՞նչ էր այդ դադանային արարքի, այդ
մասնաշաղկան ջարդի պատճառը:

Ազարտեցեղոս պատմադրի ասելով
Տրդատ թագաւորը հրապուրվելով Հռիփ-
սիմի դեղեցկութիւնից «Որոյ ոչ գոյր
համեմատ ի ծնունդս կանանց... որ դիցն
դեղեցկութիւն ունէր ի մէջ մարդկան»,
յոնի ուժով արքունիք էր բերել տղի և
մտադրվել էր հետն ամուսնանալ, իսկ
Հռիփսիմեն քացարձակ մերժել էր նրան և
համարձակվել էր նրա բուն ցանկութեան
ու կրքերին ուժեղ դիմադրութիւն ցույց
տալ և արքունիքից փախչել:

Ըստ Խորենացու ավանդութեան Հռիփ-
սիմյանք Հոռոմ քաղաքի ս. Պողոսի կուսա-
նաց վանքի 300 կույսերիցն էին և Դիոկ-
ղետիանոս կայսրից, որը ցանկացել էր
Հռիփսիմին կնութեան առնել, 70 հոգով
ծածուկ փախել են Ալեքսանդրիա, այդտե-
ղից անցել Երուսաղեմ և Միջագետքի Եդե-
սիա քաղաքից մեկնել են Հայաստան: Մո-
կաց, անձեմացայց Տոմր գավառների մի-
ջով ճանապարհորդելով միառժամանակ
Վանի մոտ եղած Վարդա լեռան վրա բը-
նակվելով անցել են Այրարատ գավառը և
մայրաքաղաք Վաղարշապատի հյուսիս-ա-
րեւելյան կողմն եղած այգիների հնձանների
մէջ բնակութիւն են հաստատել:

Պատմադրերի հիշատակած այս ավան-
դութիւնը մի շարք կետերով պատմական



Ս. ԳԱՅԱՆՆԻ ՎԱՆՔԸ

ստույգ իրողությունը չի ղուդաղխում և բանասերների կողմից լուրջ ու ճշգրիտ առարկության, իրավացի քննադատության է ենթարկվել և նոր կարծիքների տեղիք է ստել:

Այդ կարծիքների մեջ ամենահավանականը և հիմնավորն այն է, որ Հռիփսիմյանը Անձեյացյաց դատուի Հոգւոյ վանքի հայ կույսերից պետք է եղած լինեն (Մ. Օրմանյան «Աղղաղատում և Մ. Նարոյան» Հայոց եկեղ. պատմությունը):

Հոգւոյ կուսանաց վանքը, ըստ ավանդության, հիմնել է Բարդուղիմեոս Առաքյալը Ա. դարում Անձեյացյաց դավառի Անահտի մեհյանի տեղը և վանքին նվիրել է յուր հետ բերած Տիրամոր նկարը: Սկզբում այդ վանքի մայրապետներն եղել են Մեհյանի նորադարձ քրմուհիները, որոնց մասին Պորենացին դրել է «Ճշմարտացի նշան և սքանչելիս կատարէր Աստուած ի ձեռն սուրբ կանանց» (Թուղթ առ Սահակ Արծրունի, էջ 296):

Արդեն Ա. դարից սկսած նկատվում է, որ վանական, ճշմարտական կյանքն սկսել էր կամաց-կամաց բողոքներ արձակել: Մարդիկ աշխարհի կյանքից ղզված, սեռախին բնազդի ուժը չեղոքացրած, թողած կյանքի ամեն տեսակ հաճույք ու վայելք՝ ընտանիք, ծնող, սղոպական, իրենց կյանքը նվիրում են Փրկչին և երկրային կյանքը անցողիկ, սին ու ունայն համարելով, երկրնքի արքայության հուսով տոգորված ու ողջնչված պահելով, ծոմապահությամբ ու աղօթքներով էին օրերն անցկացնում, վանքի խցերում առանձնացած:

Հռիփսիմեն ևս մանկության հասակից վանքում սնվելով ու մեծանալով, մայրապետ Գայանեի ձեռքի տակ տարիներ շարունակ վանական, քրիստոնեական ջերմեռանդ ոգով էր դաստիարակվել և Տրդատի պալատական կյանքի հրապույրները նրան չկարողացան շլացնել, գրավել ու դալթակղեցնել: Նա հաստատակամ ու անհողողոմնաց, իր դավանանքին և ուխտին, արևելքի արքունիքին հատուկ սարսափը մի կողմ վանեց և մահը դերադաս համարեց, քան

թե պալատական չվայտ ու զեխ կյանքի վայելքները:

Եթե պատմական մի թուուցիկ ակնարկ ձգենք այդ ժամանակաշրջանի վրա, կտեսնենք, որ քրիստոնեությունը սկզբում Միջագետքից մուտք գործեց Հայաստան հարևան եղեսիա ու Մծրին քաղաքներից:

Առաջին անգամ քրիստոնեական համայնքներ առաջ են եկել Վանա լճի հարավային կողմն ընկած դավառներում և նրա սահմանակից վայրերում, ուր Տիգրան Մեծի օրից սկսած հրեա դադթականների ստվար բաղմություն էր ապրում:

Այդ երկրամասը դարեր շարունակ Պարսկաստանի և Հռոմի կռվախնձորն էր եղել: Եբք Տրդատը հռոմեական լեղեռններով վերադարձավ Հայաստան՝ այդ երկրամասը նա Պարսկաստանից ետ խլեց և իր տերապետությանը ենթարկեց:

Պարսից իշխանության օրով քրիստոնեությունն այդ կողմերում այնքան տարածված ու ամրապնդված էր, որ հայերը Գ. դարի կեսերին արդեն իրենց առանձին հայ եպիսկոպոս հովվապետներն ունեին, որոնց մասին հիշատակել է Եվսեբեոս Կեսարացի պատմագիրը:

Տրդատը մանկությունից հռոմեական կայսրության մայրաքաղաքում ապրելով կայսրների քրիստոնեության դեմ հարուցած խիստ հալածանքներին ակնատես էր եղել. Հայաստան վերադառնալով հայրենի կապաշտական կրոնին մոլեռանդ պաշտպան կանդնեց և քրիստոնեության դեմ սաստիկ հալածանքներ սկսեց և դրա առթիվ առանձին հրովարտակ գրել տվեց և երկրում տարածեց: Այդ հրովարտակի մեջ առված էր.

«... Մանաւանդ վասն աղանդին քրիստոնէից պատուիրեալ է ձեղ, զի հաղար և բիւր դէպ է, եթէ դոցի ոք, զի նոքա անհնարին լինին խափան դիցն պաշտաման, դայնպիսին թէ գտցեն և վաղվաղակի ի մէջ անցնեն, յարքունուստ պարգև և պատիւք նոցա լինին շնորհեալ, որ զնոսայն յայտնեսցեն: Ապա թէ ոք չյայտնես-



Ս. ՀՈՒՓԱՄԵՆԻ ՎԱՆՔԸ

ցէ՛ զայնպիսին, կամ թաղուսցէ՛ և
դոցի այնպիսին ընդ մահապարտ
համարեալ լիցի և ի հրապարակ ար-
քունի եկեալ մեռցի և տուն նորա
յարգունիս երթիցէ» (Աղաթ. էջ
76) :

Այժմ պարզ պետք է լինի, որ այդ նոր
նվաճած դավառներում քրիստոնեյաների
դեմ եղած հալածանքն ավելի ուժեղ պետք
է եղած լինի և Հռիփսիմյանքն այդ հալա-
ծանքի զոհերիցն են :

Ըստ այդ ավանդութեան Հռիփսիմյանց
հոշոտված դիակները թաղալորի հրամա-
նով դրսում անթաղ են մնացել շներէ, գա-
ղանների ու թռչունների կերակուր դառնա-
լու համար :

Այդ Զարգից փնջ օր անց Տրդատ թա-
ղալորը հոգեպէս ցնցված ծանր հիվանդա-
նում է «...առ անձուկ սիրոյ դեղոյն Հռիփ-
սիմեայ», ասում է Աղաթանգեղոսը : Թա-
ղալորի քույր Սոսորոյադուխտը մի տեսիլ-
քից դրդված նախարար Օտա Ամատունուն
ուղարկում է Արտաշատ, Սոսորոյադու
նում են սուրբ Գրիգորին, որը քրիստոնեայ
լինելու պատճառով Տրդատի հրամանով
խիստ չարչարանքներ կրելուց հետո ձգվել
էր Սոսորոյադու :

Սուրբ Գրիգորը բժշկեց Տրդատին և
Հռիփսիմեանց նահատակների մատուցները
հալաքել տալով նրանց նահատակման տե-
ղում ամփոփեց և նրանց վրա վկայարան-
ներ կառուցել տվաւ, որ հետո Երգ դա-
րում ս. Սահակ Պարթևիւր նորոգել է
տվել :

Դրդ դարում Կոմիտաս կաթողիկոսը
Հռիփսիմէի հիշատակը հալեթագնելու հա-
մար նրա անվան կառուցած հին ու խար-

խուլ վկայարանը քանդել է տվել և կառու-
ցել ներկայիս Հռիփսիմյանց այն վեհաշուք
եկեղեցին, որը մինչև այժմ չեն ու կան-
դուն է մնացել, որն այդ դարի հայ ճար-
տարապետութեան գեղեցիկ կոթողներից
մեկն է հանդիսանում յուր առանձնահա-
տուկ կառուցվածքի ոճով և հայ ու օտար
այցելուների ու ճարտարապետների դար-
մանքն ու հիացմունքն է չարժու՛մ :

Կոմիտաս կաթողիկոսը նորաշէն եկեղե-
ցու օծման հանդեսին առաջիկ ևս չուք ու
փառահեղութիւն տալու համար անձամբ
հորինեց «Սեփնք նուբրեալք» հայտնի շա-
րակներ որն այրենական կարգով է զըր-
ված, 36 տնից բաղկացած և որպէս հմուտ
երաժիշտ ստեղծեց երկնաալաց ու դազմա-
շունչ այն եղանակը, որով մինչև այսօր
երգում են Հռիփսիմյան տոնին մեր եկե-
ղեցու սպասաւորները :

Հռիփսիմյանք բախտեան չէ, որ Գ.
դարի վերջին որպէս քրիստոնեութեան լու-
սատուներ ծագեցին Հայաստանի հորիզո-
նում և տիրապետող կոադաչտական կրօնի
խալար մեղր փարատեցին, այլև նրանք
դարձան հայոց եկեղեցու հետադա սերունդ-
ների անշեղ համոզմունքի, անհողողղ
կամքի ու վճռականութեան, պաշտած դա-
դախարի անձնադոհութեան մի լուսավառ
սիմվոլ, որով տողորված ու ողկնջված
հայոց եկեղեցու դավակները կարողացան
դարեր չարունակ գերադանց ուժերի դեմ
պայքար մղել, իրենց դոյութեանը պաշտա-
նել պարսկական, արաբական, թաթարա-
կան ու մոնղոլական աշխարհակործան ար-
շախանքների ու ամիրաճութեան ընթաց-
քում :

10—6—1944 թ.

Ի Ս. Էջմիածին

ՍՈՒՐԵՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ